ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՒՐԱՑԱՆԸ*

Բանալի բառեր՝ Մուրացան, Գևորգ Մարզպետունի, արաբական զավթիչներ, պատմավեպ, ռոմանտիզմ, հայ պատմիչներ, ավանդույթ, հայրենասիրություն, ազգային ազատագրական պայքար, պատմության փիլիսոփայություն:

Մուրացանը գրական ասպարեզ իջավ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ եվրոպական գրականության մեջ, առանձնապես Ֆրանսիայում, իր անջնջելի հետքն էր թողնում Վիկտոր Հյուգոյի, իսկ հայ իրականության մեջ՝ Րաֆֆու դասական ռոմանտիզմը: Դա 19-րդ դարի վերջին տասնամյակներն էին, երբ ռեալիզմը գերիշխում էր համաշխարհային գրականության գործընթացում: Սակայն հայոց մեծերից Մուրացանը հրաժեշտ չտվեց նախընտրած ստեղծագործական մեթոդին, իրեն դրսևորելով որպես հայկական ուշ ռոմանտիզմի ականավոր ներկայացուցիչ: Դա ոչ պատահականություն էր, ոչ էլ երդմանը հարազատ մնալու վճռականություն, այլ նրա ստեղծագործական ընդհանուր հատկանիշների դրսևորում՝ իրականության արտացոլման հիմնական սկզբունքների առումով: Նա համոզվել էր, որ ռոմանտիզմի գիտական և փիլիսոփայական ընդհանուր երանգներով կարող է խորապես հետազոտել երևույթները և հասնել արվեստի ճշմարտացիության առինքնող պահանջին: Եվ ռոմանտիզմի հզոր միջոցներով նա ընտրեց հայ ժողովրդի անցած և ներկա կյանքի կենսական երևույթները, պատկերեց ու գնահատեց այդ ամենը մեթոդի ելակետային սկզբունքների հրամայականով: Եվ պետք է ընդգծել, որ Մուրացանը աշխարհի ռոմանտիկ մեծությունների պես յուրովի մոտեցավ կյանքի ուսումնասիրության և ճանաչողության խնդրին, փաստերի ընտրության և պատկերման եղանակին, գեղարվեստական միջոցներին և հասավ

**Հոդվածն ընդունվել է 13.12.2016:*
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

իր նպատակին՝ գրականության գլխավոր պրոբլեմի՝ մարդու կերպարի ստեղծման մուրացանյան վարպետությամբ:

Սակայն մեր այս բնութագրումը միակողմանի կլինի, եթե չընդգծենք Մուրացանի կողմից ռոմանտիզմի կարևոր հատկանիշներից մեկի՝ գեղագիտական իդեալի և իրականության մեջ նրա իրագործման ուղիների խորքային ըմբռնումը: Եվ մուրացանյան ռոմանտիզմը բնորոշվեց հասարակության և անհատի կատարելության երազանքով, նրանց զարգացման հեռանկարների որոշակի պատկերացումներով, որոնք արվեստի բնագավառում գնահատվում են որպես գեղագիտական իդեալ:

Մուրացանը բոլոր դեպքերում հենց էն գլխից գիտակցել էր, որ մեթոդի հիմքը օբյեկտիվ իրականությունն է, որ ամեն ինչ պայմանավորվում է դարաշրջանի պատմական բովանդակությամբ, սոցիալական իդեալներով, նաև գեղարվեստական ճաշակով:

Վերջապես Մուրացանի կողմից ռոմանտիզմի ընտրությունը պայմանավորված է իր աշխարհայացքով, իր տաղանդի առանձնահատկություններով, որոնց շնորհիվ իր ուրույն տեղը գրավեց Րաֆֆու, Ռափայել Պատկանյանի, Ծերենցի լուսավոր շարքում:

Ծանոթանալով Մուրացանի երկերին, համոզվում ես, որ նա դասական ռոմանտիզմի հավերժող ներկայացուցիչներից է: Յուրահատուկ են կյանքի ռոմանտիական արտացոլման մուրացանյան առանձնահատկությունները: Նրա «Ռուզան» դրամայում, «Անդրեաս Երեց» երկում և առանձնապես «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում ռոմանտիզմը ելնում է իրականության և իդեալի սուր հակադրության գիտակցումից: Նրա ռոմանտիզմի և առհասարակ ռոմանտիկական մտածողության կարևորագույն գծերից մեկը կյանքն իդեալի համապատասխան վերակերտելու, վերափոխելու ձգտումն է: Դրանով էլ պայմանավորված են կյանքի բացառիկ, արտակարգ ու անսովոր երևույթներն ու դեմքերը պատկերելուն ռոմանտիկական միջոցները: Համարձակորեն կարող ենք նշել, որ սուբյեկիվությունը «Գևորգ Մարզպետունի» վեպում բարոյահոգեբանական բացահայտումներն այնպիսի վարպետությամբ են ներկայացված, որ Մուրացանը կարող է ասել. «Գևորգ Մարզպետունին ես եմ»:

Հանդես գալ Րաֆֆու «Սամվել» պատմավեպից հետո և արժանանալ բարձր գնահատականի, բոլորին չէ տրված: Մուրացանը, որ ընթերցողին էր հանձնել «Ռուզան»-ը և «Անդրեաս Երեց»-ը, իր տաղանդի շնորհիվ ոչ միայն դարերին հանձնեց «Գևորգ Մարզպետունի»-ն, այլև դրանով մի նոր ուժով բորբոքեց ազգային-ազատագրական զինված պայքարի գաղափարը մի այնպիսի ժամանա-

կաշրջանում, երբ Թուրքիայում Սուլթան Համիդի հրամանով գլխատվում էր արևմտահայությունը՝ աշխարհի խոշոր տերությունների անտարբեր աչքի առջև:

Հիմք ընդունելով 8-10-րդ դարերի պատմիչներ Ղևոնդ Երեցի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու և մյուսների մատյանները, Մուրացանն անդրադարձավ պատմական Հայաստանի այն դարաշրջանին, երբ 300-ամյա դաժան պայքարից հետո հայ ժողովուրդը վերջին կռիվներն էր մղում արաբական զավթիչների դեմ: Հիրավի, դա Հայոց երկրի ամենահերոսական ժամանակաշրջանն էր՝ Բագրատունիների թագավորության 10-րդ դարը:

«Գևորգ Մարզպետունի» պատմավեպում զուգահեռ անց է կացված երկու հիմնախնդիր: Դրանք մի կողմից անձնուրաց հայրենասիրության բացահայտումն է, մյուս կողմից՝ ազգային դժբախտության պատճառները:

Մուրացանն ստեղծել է պատմական Հայաստանի ռոմանտիկական կերպարը, պատկերելով հինավուրց ամրոցը, եկեղեցիները, պարիսպներն ու աշտարակները, արքունական դղյակը՝ վեհացնելով մայր ժողովրդին, որը հրաշքներ է գործել և՛ հեթանոսական, և՛ քրիստոնեական շրջանում:

Վեպի ողջ ընթացքում փայլում է Մուրացանի պատկերավոր մտածողությունը: Բայց նկատելի է նրա հավատարմությունը հայ պատմիչների հաղորդումներին: Նա ուշադրության կենտրոնում է պահել դարաշրջանների կոլորիտը գեղարվեստական պատկերներով ներկայացնելու կարևորությունը:

«Գևորգ Մարզպետունի» վեպում Մուրացանը նկարագրում է արաբական զորքերի դաժանությունը՝ կարծես շարունակելով 8-րդ դարի պատմիչ Ղևոնդ Երեցին: Ահա թե ինչպես է ներկայացնում Ղևոնդ պատմիչը Մուհամմեդի հետնորդներին. «Քսան տարի իշխանությունը ձեռքում պահելուց հետո մեռավ Մահմետը (632թ.): Դրանից հետո Մահմետի իշխանությունը փոխանորդեցին Աբու Բաքրը, Ամրը և Օթմանը… Նա որոմ սերմանողներին պատվիրել էր. «Ելեք ամբողջ աշխարհի դեմ, նվաճեցեք նրանց ձեր ձեռքի տակ, քանզի մեզ վայելելու համար տրված է երկրի պարարտությունը, կերեք երկրի ընտրյալների միսը և խմեցեք զորավորների արյունը»: (1)

Ղևոնդ Երեցը, մեջբերելով Մուհամմեդի այս մարդակերության կոչը, մարգարեաբար կռահում էր իսլամիզմի ահավոր բնույթը՝ այլադավան ժողովուրդների ճանապարհին: Մարգարեական խորհուրդ համարենք նաև Մուրացանի «Գևորգ Մարզպետունի»-ն: Մեր օրերի արմատական իսլամիզմը մեր մեծ երախտավորների անսխալ կռահումն

էր և նախազգուշացումը մարդակերության և անհանդուրժողականության այդ հրեշավոր պատգամի վերաբերյալ:

Մուրացանի հերոսի՝ Գևորգ Մարզպետունու հայրենասիրությունը կոնկրետ խորհրդից վերածվում է արյունարբու թշնամուն իսպառ ոչնչացնելու պատգամի: Ահա թե Գևորգ Մարզպետունին ինչ վճռականությամբ է թշնամու դեմ պայքարում: Մարտից առաջ Աշոտ Երկաթ թագավորը զարմանում է, որ Գևորգ Մարզպետունին որոշել է իր քսան զինվորներով հարձակվել արաբ ոստիկան Բեշիրի բազմաքանակ զորագնդի վրա:

Գևորգ Մարզպետունին այդ պահին իմաստնաբար ժխտում է Ավետարանի պատվիրաններում հնչող «Մի՛ սպանաներ» խորհուրդը: Նա թագավորին ասում է. «Այժմ հասել է այդ պատվիրանի դեմ գործելու ժամանակը, մենք շարունակ պիտի սպանենք»: (2)

Իսկ երբ Աշոտ Երկաթ թագավորը դիմում է նրան. «Բայց ի՞նչ կարող են անել քսան հոգիները թշնամու ահավոր զորության առաջ», Մարզպետունին պատասխանում է. «Իմ քսան հոգիներից յուրաքանչյուրը կարող է վանել հարյուր հագարացի…Ես չեմ կարող նստել իմ բերդում և իմ կյանքը խնամել այնպիսի մի ժամանակ, երբ թագավորը գահը թողած՝ ճգնում է Սևանում, երբ կաթողիկոսը աթոռը կորցրած՝ թափառում է աստանդական, երբ ժողովուրդը հազարներով ճարակ է դառնում թշնամուն… Եթե իմ եղբայրակիցները մեռնում են, ես ինչո՞ւ պիտի ապրեմ, մի՞թե նրանց կորուստը ողբալու համար»: (3) Եվ երբ տեղի է ունենում ծովամարտը, ջախջախվում է Բեշիրի զորքը, Մարզպետունին գոհունակություն է ապրում, որ հայերն այս կռվում ևս ծնկի բերին թշնամուն:

«Գևորգ Մարզպետունի» վեպում քիչ չեն այն էջերը, որոնք հիշեցնում են 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի Պատմության մեջ ներկայացված իրադարձությունները՝ առանձնապես Հայոց փոքրաթիվ զորագնդերի նվաճած հաղթանակների մասին: Այսպես, պատմիչը գրում է Ատրպատականի Գանձակ քաղաքում պարսիկների և հայերի միջև տեղի ունեցած պատերազմի մասին, որտեղ հաղթանակը շահում են հայ զինվորները: Կռվին մասնակցած Պարսից Շապուհ արքան պարտված վերադառնում է իր իշխանության երկիրը, զարմանք հայտնում կռվող հայոց գնդի քաջության վրա: «Զարմացել եմ,- ասում է նա,- իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անցկացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվը այս էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հար-

ձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ, հզոր և անշարժ աշտարակ, իսկ երբ մենք նրանց փոքր-ինչ վանում էինք, նրանք ապաստանում էին հոռոմների լեգեոնների մեջ, որոնք իրենց կից առ կից վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում, ինչպես մի պարսպապատ ամրոցի մեջ: Եվ այնտեղ փոքր-ինչ շունչ առնելով՝ նորից դուրս էին գալիս ու կռվում, մինչև որ Արյաց զորքերին ամբողջովին ոչնչացրին: Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած՝ Հայկական գնդի միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսքան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին քաջալերվում պատերազմի ժամանակ… կամ Մուշեղի այն մոլեգնած գունդը, ինձ այնպես էր թվում, թե այդ գնդից բոց ու կրակ են թափում, և դրոշակներն այնպես էին գնդի մեջ, կարծես հրդեհի բոց է անցնում եղեգների միջով… Երանի՜ նրան, որ հայոց գնդի տերն է, այնպիսի՜ տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի»:(4)

Փոքրաքանակ զորագնդով թշնամական բազում զինվորներին ոչնչացնելու ավանդույթը շարունակվել է դարեդար, հասել մեր օրերը:

Ղևոնդ Երեցը նկարագրում է արաբների կողմից Պարսկաստանի գրավումը ու ցավով արձանագրում. «Զորքի մի մեծ հատված բաժանվելով, Պարսկաստանի կողմից ասպատակեց Հայոց երկիրը և գերեց Մարաց ավանները, Գողթն գավառը և Նախճավան դաստակերտը: Տղամարդկանց շատերին սրի քաշեցին, այլոց գերեվարեցին կանանցով ու մանուկներով և անցկացրին Երասխ գետից Ջուղայի հունով: Այս զորքը երկուսի բաժանվեց, մի մասը գերիներին վերցնելով, դարձավ իր երկիրը, իսկ մի գունդն էլ առանձնանալով՝ ասպատակեց Արտազ գավառը… (5)

Ճիշտ է, Մուրացանը պատմավեպում կոնկրետ պատկերում է 10-րդ դարի իրադարձությունները, սակայն չի շրջանցում խալիֆայության կազմակերպած անմարդկային դաժանությունները՝ սկսած 7-րդ դարի 30-ական թվականներից, որ հանգամանալից ներկայացված է Ղևոնդի «Պատմության» մեջ:

Մուրացանը Գևորգ Մարզպետունու գեղարվեստական կերպարն ստեղծելիս նկատի է ունեցել 7-10-րդ դարերում արաբների դեմ տեղի ունեցած հերոսամարտերում հայ քաջազունների վճռականությունը, ինքնավստահությունը, փոքրաթիվ զինվորականներով բազմաքանակ թշնամական զորագնդերին ջախջախելու հնարքները: Այսպես, Թովմա Արծրունին իր «Պատմություն Արծրունյաց տան» գրքում նկարագրում է ծագումով թուրք, արաբական ոստիկան Բուղայի արշավանքը դեպի Արցախ: Նա երկու հար-

յուր հազարանոց զորագնդով հարձակվում է Արցախի իշխան Եսայի ապու-Մուսեի զորքի վրա: Ուղիղ մեկ տարի Բուղան պաշարում է Գտիչ վանքը, սակայն չի հաջողվում գրավել այն: Մեկ տարվա ընթացքում Եսայի իշխանն իր փոքրաթիվ զորքով 28 անգամ հարձակվում է Բուղայի զորքերի վրա ու պարտության մատնում: Վերջին օրհասական պահին Բուղան հրովարտակ է հղում Եսայի իշխանին, պահանջելով հանձնվել: Բուղայի հոխորտանքին Եսայի իշխանը պատասխանում է հեգնանքով: Նրա պատասխանը Թովման զետեղում է իր գրքում, որից բերում ենք մի հատված. «Թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ զորությունը և քանի դեռ կենդանի եմ, կընդդիմակայեմ տեր Աստծո ուժով ու զորությամբ և քեզ տեսնելու եմ ոչ թե խաղաղության սիրով, այլ զենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով և ընտիր երիվարներով: Եվ եթե քեզ հաճելի է ապրեցնել քեզ ու քո զորքը, արի ել այստեղից և գնա իմ երկրի սահմաններից: Ապա թե ջանաս զրկվել այս կյանքից՝ քո զայրույթի, կատաղության պատճառով և ոսկորներդ ցրես անապատներում ու դառնաս երկրի գազանների, երկնի թռչունների կերակուր, քո կամքը թող լինի, ես անպարտ եմ քո արյան համար, մանավանդ որ մեծ բարեպաշտություն եմ համարում սպանել Աստծո թշնամիներիդ… Արդ չեմ կամենում երկար խոսել քեզ հետ, քո ձեռքերում է խաղաղությունը ու խառնակությունը: Եթե, ինչպես ասացի, հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ: Դու կդառնաս թիրախ, իսկ իմ աղեղը՝ խոցոտող, դու՝ ախոյան, իմ տղաները՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքը քեզ դատապարտող, քոնը պատերազմ կլինի, և մերը՝ հաղթություն, քո մարմինը և իմ նիզակը, քո պարանոցը և իմ սուրը, քո ստացվածքը՝ մենք նրա ժառանգորդ, քո ավարը՝ մենք ավարառուներ, դու ավազակ, մենք՝ կողոպտողներ, դու՝ եղեգն, մենք դյուրավառ կրակ, դու հարդ, իսկ մենք՝ դյուրությամբ փչող քամի, դու ծաղիկ, իսկ մենք՝ թարշամեցնող խորշակ, դու՝ պտղալից հանդ, մենք՝ ապականող կարկուտ, դու շինվածք առանց հիման, իսկ ես հիմնիվեր տապալող հեղեղ, դու լեշ, իմ զորքը՝ հոշոտող գազան, որ պատառոտում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, իսկ մենք՝ մանուկներ, որ բռնելով քո զորությունը, խաղում, կատակում ենք քեզ հետ և քո այդ ողջ հպարտության ու անբաստանության հետ, դու վայրի երե, մենք՝ որսորդներ, դու թռչուն, մենք՝ բարձրությունից քեզ ցած ենք իջեցնում և ձգում որոգայթի մեջ, դու ծովի վիշապ, մենք՝ կարթ, քո քիմքից վեր ենք ձգում քեզ անդունդների խորքից, դու իբրև եղջերու առանց եղջյուրների, մենք

արծիվներ քո վրա, քո աչքերը կուրացնողներ, որ քո լեշը գցում ենք իմ ձագերին և խորշերում բնակվող աղվեսներին: Եվ ահա դարձյալ եմ ասում. անհաստատ է քո ունեցածը: Եվ մինչև որ քեզ վրա չվերցնես այն, ինչ խոսեցի քո պատգամավորների հետ ու ավելի ջանաս վտանգել մեզ՝ դու կընդունես վտանգավորը»: (6)

Եսայի ապու-Մուսեն այդ պատասխանից հետո իր ամբողջ զորությամբ իջել ու շարժվել է արաբների վրա, հասցրել մեծամեծ հարվածներ, վերցրել բազում ավար և վերադարձել իր բանակատեղին:

Բուղան կազմակերպում է հերթական հարձակումը: Սակայն Եսայի ապու-Մուսեն արիաբար մտնում է ասպարեզ և դարձյալ պատերազմում արաբների դեմ: Ինչպես գրում է Թովմա Արծրունին, հայ զինվորները «դարձան իբրև երկաթի մի մեծ բլուր կամ հույժ կարծր վեմ և իրար շուրջ խռնվելով կպան միմյանց, ինչպես մեկ մարդ: Իսկ արաբացոց զորքը սրտապնդվեց և դեպի ներսը շրջափակեց Արցախի զորագունդը և դիմեց հանդգնաբար նրանց վրա, որոնք, սակայն, մնացին անշարժ, առաջ չընկան մեկ-մեկուց: Եվ մինչ արաբները կարծում էին, թե նրանք մատնվեցին իրենց ձեռքը, սակայն նրանք աղոթում էին և Աստծուն կանչում իրենց օգնության: Ապա դիմեցին նրանց վրա՝ չորս մասով՝ Քրիստոսի խաչի նմանությամբ: Հարվածեցին և ճեղքեցին զորքի ճակատը ու նրանց դարձրին դեպի զառիվայրը և իջեցրին այն լեռան վրայից: Թշնամին կրեց մեծամեծ հարվածներ, ինչպես քամուց հարդն է քշվում, կամ ծուխը ցրվում մրրկից, և այդպես նրանք կորան գնացին Արցախի զորքի առջևից… Սրանց պատերազմը երկարեց մոտ մեկ տարի և ոչ մի ճակատամարտում Ապումուսեն ետ չընկրկեց Բուղայի առջևից: Ու ինչպես պատմվում է, նրանց պատերազմների թիվը հասավ 28-ի, և արաբական զորքը ջարդվեց այսքան կռիվներից, քաջության հանդեսներից»: (7)

Թովմա Արծրունու «Պատմության» մեջ նկարագրված այս հերոսամարտերի նման խիզախումները հստակ նկատելի են Մուրացանի պատմավեպի էջերում, ուր ներկայացվում են Գևորգ Մարզպետունու գլխավորած հայ քաջորդիների հաղթական ճակատամարտերը արաբական զորագնդերի դեմ: Այդ են վկայում վեպի «Անակնկալ վախճան», «Այրիվանքում», «Նոր դիմումներ», «Բյուրականի առումը», «Հերոսի որոշումը», «Մի ծաղկով գարուն», «Ծովամարտ» և այլ մասեր:

Կարդալով ու վերընթերցելով Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը, գալիս ես մի եզրակացության, որ ականա-

վոր գրողն ամբողջության մեջ ուսումնասիրել է Փ. Բուզանդի, Ղևոնդ Երեցի, Թ. Արծրունու, Հ. Դրասխանակերտցու պատմագրությունները, յուրացրել Հայոց պատմության փիլիսոփայությունը և այն կտակել գալիք սերունդներին: Նրա բարձրարվեստ այդ երկի գաղափարներն ու դասերը յուրացվել են Սարդարապատում ու Մեծ Հայրենականում, 88-ի Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտում, 1916-ի ապրիլյան քառօրյա պատերազմում, որոնց ընթացքում յուրաքանչյուր հայ դյուցազուն իրեն դրսևորել է որպես Գևորգ Մարզպետունի, անշուշտ, իր երախտագիտությունն արտահայտելով անմահ Մուրացանին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ղևոնդ, Պատմություն, «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 18-20:

2. Մուրացան, «Գևորգ Մարզպետունի», «Սովետական գրող» հրատ., 1977, էջ 287:

3. Նույն տեղում, էջ 288:

4.Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, «Հայաստան» հրատ., 1968, էջ 245:

5. Ղևոնդ, Պատմություն, «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 20:

6.Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, «Հայաստան» հրատ, 1999, էջ 168-169:

7. Նույն տեղում, էջ 172:

ԱՄՓՈՓՈՒՄ
ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՒՐԱՑԱՆԸ

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

Սույն հոդվածում լուսաբանվում է հայ դասական գրող Մուրացանի առնչությունները հայ հին պատմագրության հետ: Նրա «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի վերլուծության հիման վրա նշվում է մեծ գրողի պատմահայեցողությունը և ընդգծվում, որ նա խորապես ուսումնասիրել է Փ. Բուզանդի, Ղևոնդ Երեցի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու պատմագրությունները, յուրացրել Հայոց պատմության փիլիսոփայությունը և այն կտակել գալիք սերունդներին: Եվ դարերի ընթացքում յուրաքանչյուր հայ դյուցազն իրեն դրսևորել է որպես Գևորգ Մարզպետունի, անշուշտ, իր երախտագիտությունն արտահայտելով անմահ Մուրացանին:

РЕЗЮМЕ

АРМЯНСКАЯ ИСТОРИОГРАФИЯ И МУРАЦАН

СОКРАТ ХАНЯН

Ключевые слова: Мурацан, Геворг Марзпетуни, арабские захватчики, романтизм, армянские историографы, традиция, патриотизм, национально-освободительная борьба, философия истории.

В данной статье освещается соотношение армянского классика Мурацана с армянской древней историографией. На основе анализа его исторического романа "Геворг Марзпетуни" отмечается историческая концепция великого писателя и подчеркивается, что он глубоко изучал исторические труды Павстоса Бузанда, Гевонда Ереца, Товма Арцруни, Ованеса Драсханакертци, осваивая философию истории и завещая ее будущему поколению.

И в течение веков каждый богатырь-армянин проявлял себя как Геворк Марзпетуни, несомненно, выражая свою благодарность бессмертному Мурацану.

SUMMARY

ARMENIAN HISTORIOGRAPHY AND MURATSAN

SOCRAT KHANYAN

Key words: Muratsan, Gevorg Marzpetuni, Arab invaders, romanticism, Armenian historiographers, tradition, patriotism, national liberation struggle, the history of philosophy.

This article highlights the attitude of the Armenian classic Muratsan to the ancient historiography. The writer’s great historical concept is marked which shows that through the analysis of his historical novel "Gevorg Marzpetuni", he deeply studied the historical works of Pavstos Buzand, Ghevond Erets, Tovma Artsruni, Hovhannes Draskhanakerttsi, mastered the philosophy of Armenian history and bequeated it to the future generations. And over the centuries, each Armenian hero showed himself as Gevorg Marzpetuni undoubtedly expressing his gratitude to the immortal Muratsan.